

Անատոլի Ավետյան. Ջուսպ արտահայտչամիջոցների վարպետը



Սիբիրի Պրոկոպևսկ քաղաքում 1952-ին ծնված և միայն 14 տարի անց Հայաստան տեղափոխված Անատոլի Ավետյանն արմատներով Լոռվա աշխարհից է: Նրա ամենասիրած քաղաքը Կիրովական-Վանաձորն է, որի պատվավոր քաղաքացին է 2009 թվականից: Ուստի պատահական չէ, որ մինչև ցուցահանդես կազմակերպելը նա իր աշխատանքները առաջինը ցուցադրում է վանաձորցի արվեստասերներին: Չէ՞ որ, ըստ նրա, դա

յուրաքանչյուր արվեստագետի հոգու պարտքն է. նախ և առաջ ներկայանալ համերկրացիներին՝ ստեղծագործական հաշվետվություն տալու նրանց և անելու արած-չարածի հաշվեկշիռը:

Անատոլի Ավետյանը համարձակ փորձարկումներ անող և անվերջ որոնող արվեստագետ է: Մետաղի դրվագման ասպարեզի նրա աշխատանքներին ծանոթ էի շատ վաղուց: Սակայն երբեք չէի մտածում, թե անցնող տարիներին նա այդչափ խորանալու է այդ ոլորտում՝ հասնելով, հիրավի, ակնառու նվաճումների: Ժամանակի ընթացքում է նա գույնի կարիքն զգացել և մետաղը վերածելով կտավի՝ ստեղծել է արժեքավոր գեղարվեստական ստեղծագործություններ: Թերևս տեղին է հիշել, որ մետաղադրվագման և արծաթի ու պղնձի վրա դրվագաքանդակներ անելու արվեստը հայոց մեջ զարգացած է եղել վաղնջական ժամանակներից և բոլորովին այլ հարց է, որ այն մեզանում հետագա տարածում չգտավ:

Անատոլի Ավետյանը խտրություն չի դնում նյութերի միջև: Նրան հավասարապես տրվում են մետաղն ու փայտը, քարն ու ապակին, էլ չենք խոսում՝ կտավի ու ներկերի մասին: Այդ ամենը իրավունք է տվել, որ արվեստագետն իր մասին գրի. «Նյութերի բազմազանությունը և ամենօրյա փորձարկումները իմ տարերքն են»: Իրոք, նա սիրում է գույնը, ձևը, գիծը, ծավալն ու ֆակտուրան և, ինչպես ինքն է իրեն բնութագրում. «Արարում եմ՝ ինչպես կամենում եմ, ինչ կամենում եմ և ինչով կամենում եմ»: Արդյունքում՝ նա իրեն ազատ է զգում արվեստում և ուրախ է, որ չի հարում որևէ ոճի, բնույթի ու ուղղության:

Դիտելով տարբեր տարիներին արված Ավետյանի աշխատանքները՝ մի կողմից պարզում ես նրա հավատարմությունը գեղարվեստական որդեգրած սկզբունքին, մյուս կողմից՝ զարմանում նրա երևակայության շերտերի բազմազանությամբ: Նման արդյունքի հասնելու համար արվեստագետը պիտի միաժամանակ տիրապետեր թե՛ գեղանկարչության, թե՛ քանդակի հմտություններին, իր մեջ միավորեր ու միահյուսեր

դրանց գեղագիտական առանձնահատկությունները: Հիշելով իր ուսանողական տարիները Թբիլիսիի Գեղարվեստի ակադեմիայում և Երևանի Գեղարվեստաթատերական ինստիտուտում՝ Անատոլի Ավետյանը խոստովանում է. «Հավասարապես սիրում էի թե՛ նկարել, թե՛ քանդակել: Դրա համար որոշեցի սովորել դիզայնի բաժնում, որտեղ կարելի էր միաժամանակ երկուսով էլ զբաղվել»:

Եթե նույնիսկ մտովի պատկերացնելու լինենք, թե ինչպես է արվեստագետը մուրճի մանր ու հատու հարվածներով եզրագծեր ու բարձրաքանդակներ անում պղնձե ու ալյումինե թիթեղի վրա, հետո նոր դրանք երկնագրում տարագույն ներկերով, արդեն սարսափելի կթվա գործի աշխատատարությունը: Իսկապես, մեծ աշխատասիրություն ու տքնանք է պետք մետաղի վրա ռելիեֆային գեղանկարչությամբ զբաղվելու համար: Անատոլի Ավետյանից երկար օրեր ու ժամեր է խլում յուրաքանչյուր նոր գործի ծնունդը: Բայց, ի վերջո, հաղթում է այն անդիմադրելի կիրքը, որ նա տածում է առ ստեղծվելիք նոր աշխատանքները: Վերջիններս հատկորոշվում են նախ և առաջ բարձր ճաշակով և պրոֆեսիոնալիզմով, զուսպ արտահայտչամիջոցներով շատ բան ասելու հազվագյուտ կարողությամբ:




Ավետյանը ստեղծագործում է գրեթե բոլոր ժանրերով՝ բնանկար, դիմանկար, նատյուրմորտ, կոմպոզիցիա և այլն: Դժվար է նրա՝ մեկը մյուսին գրեթե չզիջող ստեղծագործություններից առանձնացնել գեթ մի քանիսը: Բոլոր դեպքերում թվենք մի քանի անուններ հատկապես դիմանկարի ժանրից՝ «Արմենուհի», «Լուսինե», «Պատանեկություն», «Գարուն», «Աշուն» և այլն: Պայմանական անվանումներով այս գործերում հեղինակը կանանց մի ողջ դիմաշար է ստեղծել, հմայիչ գեղեցկուհիների մի ամբողջ պատկերասրահ: Հետևելով այդ ստեղծագործությունների ժամանակագրությանը՝ համոզվում ես, որ Անատոլի Ավետյանի մոտ գնալով ավելի են կատարելագործվում կերպարաստեղծման եղանակները՝ ներառելով տարբեր նյութերի համակցությունը: Հատկապես գեղարվեստական ներգործության մեծ լիցք են պարունակում պատկերաշարի մաս կազմող «Սև գլխարկ» և «Ամառ» աշխատանքները՝ արված 2009-ին:



Նույն թվականին ստեղծված «Աստվածամայրը մանկան հետ» (պղինձ, պատինա, ներկեր, կոլլաժ) նկարից գործվալից հայացքով մեզ է նայում Տիրամայրը: Բնական տխրություն կա նրա աչքերում, միաժամանակ՝ անսքող պարզություն մանուկ Հիսուսի հայացքում: Հայկական կարպետի խորքային օգտագործմամբ նկարը ձեռք է բերել ազգային ընդգծված նկարագիր և վերածվել թանգարանային իսկական նմուշի: Սրբանկարի

վերածվելու գեղարվեստական ակնհայտ հավակնություն ունի նաև Լուսինեն՝ համանուն ստեղծագործությունից:

Խորհրդանշական մեծ լիցք է պարունակում «Փարաջանով» կոմպոզիցիան, որի ձախ կողմում մեծանուն կինոռեժիսորի ավետյանական մեկնաբանությունն է, իսկ աջ մասում խորհրդային գրաքննության կնիքը՝ ծորացող արյան կաթիլներով:



Վերջին շրջանում Ա. Ավետյանը ձեռնարկել է «Իմ ժամանակակիցները» շարքը, որում արդի հայ գրականության ու արվեստի ներկայացուցիչներն են՝ իրենց դիմանկարներով և թղթին փոխանցած սեփական ձեռագրերով: Պատրաստի շուրջ 2 տասնյակ աշխատանքները հեղինակը նվիրել է Վանաձորի պատկերասրահին:



Ոչ մի կերպ հնարավոր չէ շրջանցել Ավետյանի բնանկարների շարքը: Անկախ նրանից, թե դրանց համար հենք են ծառայել մետաղը թե կտավը, արվեստագետը լակոնիկ միջոցներ է օգտագործում ներգործուն տպավորության հասնելու համար: Նրա նախասիրածը միայնակ ծառի մոտիվն է, որը գեղարվեստականից զատ նաև փիլիսոփայական իմաստ է կրում իր մեջ: Դա լավագույնս արտացոլված է 2010թ. արված եռանկարում՝ «Յաղպատ տանող ճանապարհին», «Կարմիր սարեր» և «Ոսկե աշուն»: Իրականում դրանք ոճավորված աշխատանքներ են՝ յուղաներկի առատ գործածությամբ և երկաթե սանրի կամ այլ առարկայի միջոցով հետաքրքիր ֆակտուրա ստանալու վարպետությամբ:

Ավետյանն իր վերացական բնույթի աշխատանքներում ներկի կամ գույնի անհրաժեշտությունն չի զգում: Ավելի ճիշտ՝ գունային համապատասխան զգացողության նա հասնում է անագի, պատինայի և այլ նյութերի ու տեխնոլոգիաների կիրառմամբ: Առանձնացնենք «Գիծը տարածության մեջ» շարքի գործերը՝ երկրաչափական ձևաստեղծումների բազմիմաստ զուգորդումներով:

Ամբողջական չէր լինի անդրադարձը Անատոլի Ավետյանի ստեղծագործությանը, եթե չհիշատակեինք վերջին տարիներին նրա արած քանդակները: Իհարկե, այդ աշխատանքները լոկ պայմանականորեն պետք է քանդակ կոչել: Դրանք, ավելի շատ, քանդակային կոմպոզիցիաներ են՝ բաղկացած օբսիդիանի քարակտորներից: Բնական փայլ ու ֆակտուրա ունեցող քարաբեկորները վառ երևակայություն ունեցող արվեստագետի «միջամտության»



շնորհիվ մեկ «Զինվոր» ու «Մաեստրո» են դարձել, մեկ էլ՝ «Արձագանք»ի ու «Գեղարդ»ի վերածվել: Այդ քանդակները մերթ կիկլոպյան ժամանակաշրջանի ստեղծագործություններ են հիշեցնում, մերթ՝ գերարդիական կամ «ֆուտուրիստական» գործեր՝ ձևավորելով նոր շարունակություն ժամանակակից հայ քանդակային արվեստում:

Նշենք նաև, որ «Օրինյալ երկիր, Հայաստան» շարքի 2 մեծաչափ գործեր իրենց մշտական տեղն են գտել ՀՀ Ազգային ժողովի շենքում: Դրանք ՀՀ ժողովրդական նկարչի նվերն են իր երկրի օրենսդիր բարձրագույն մարմնին:

Լևոն Լաճիկյան